

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի ԹԻՎ 609-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի ԹԻՎ 609-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հունիսի 22-ի «**Հայաստանի Հանրապետության հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական, բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման կարգերը հաստատելու մասին**» թիվ 609-Ն հրամանով հաստատված հավելված 1-ում՝
  - 19-րդ և 20-րդ կետերի 6-րդ ենթակետերում վերջակետը՝ «:», փոխարինել ստորակետով՝ «,»,
  - 19-րդ և 20-րդ կետերը 6-րդ ենթակետից հետո լրացնել նոր՝ 7-րդ ենթակետով, հետևյալ բովանդակությամբ

«7) ամփոփիչ ավարտական գնահատականների վերաբերյալ արխիվային հիմքերի բացակայության դեպքում հատկացվում է միջնակարգ կրթության ատեստատի կրկնօրինակ՝ ուսումնառության վերջին 3 տարվա ընթացքում ուսումնական հաստատության ուսումնական պլանով նախատեսված և սովորողի կողմից ուսումնասիրված առարկաների ավարտվող դասարանի տարեկան և ամփոփիչ ատեստավորման (քննական) առարկաների նշմամբ»:

### 2. Հավելված 2-ում՝

- 4-րդ կետի 1-ին ենթակետում «սահմանված ժամկետներում» բառերը փոխարինել «պետական ամփոփիչ ստուգման ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով,
- 4-րդ կետի 2-րդ ենթակետում «հաստատությունները» բառից հետո լրացնել «կամ ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները հավատարմագրված մասնագիտությունների գծով» բառերով,

- 11-րդ կետում «նորով» բառից հետո լրացնել «, որի դեպքում տրամադրվում է դիպլոմի կրկնօրինակ» բառերը,
- 13-րդ կետից հետո լրացնել 14-րդ և 15-րդ կետեր՝ հետևյալ բովանդակությամբ՝

«14. Դիպլոմը կորցրած կամ խոտանված՝ միջին մասնագիտական կամ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիրն ավարտած շրջանավարտին, ուսումնական հաստատության լուծարման դեպքում, համապատասխան փաստաթղթերի (հայտարարություններում, տեղեկանք ուստիկանությունից՝ դիպլոմի կորստի վերաբերյալ) առկայության դեպքում և արխիվային հիմքերը ստուգելուց հետո կրթության պետական կառավարման լիազորված մարմինը շրջանավարտի դիմումի համաձայն նրան հատկացնում է Դիպլոմ կրկնօրինակ: Տրամադրվող կրկնօրինակի վրա դրվում է նախարարության գլխավոր քարտուղարի ստորագրությունը և նախարարության կնիքը»:

«15. Կորցրած ավարտական փաստաթղթերի կրկնօրինակներում համապատասխան բառերի («Դիպլոմ», «Դիպլոմի հավելված») վրա սև թանաքով պարտադիր է «Կրկնօրինակ» նշումը»:

### 3. Հավելված 3-ում՝

- 8-րդ կետի 2-րդ պարբերությունը լրացնել նոր՝ հետևյալ նախադասությամբ. «Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից տրամադրվող կրկնօրինակի վրա դրվում է գլխավոր քարտուղարի ստորագրությունը և նախարարության կնիքը»:
- 10-րդ կետում «նորերով» բառից հետո լրացնել «, որի դեպքում տրամադրվում է դիպլոմի կրկնօրինակ» բառերը:

### 4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱՐԱՐ՝

Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ